

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Բ. ՎՍԵՍՎՅԱՏՍԿԻ

ԴՊՐՈՑԻ ՀԱՆՐՈԳՈՒՏ ԱՇԽԱՏԱՆՔԸ
ԳՑՈՒՂԱՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Թարգմ. Հ. ՍՍ.ՈՒԿՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ. - ՅԵՐԵՎԱՆ, 1929



Բ. ՎՍԵՍՎՅԱՏՍԿԻ

371.8

A I
4416



ԳՊՐՈՑԻ ԳԱՆՐՈԳՈՒՏ ԱՇԽԱՏԱՆՔԸ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

16396

Թարգմ. Հ. ՍԱՌԻՆՅԱՆ



Հր. № 1192,

Գրառեցվաք № 2264 (բ),

Տիրամ 2000

Պետերատի ասաջին տղարան վարարչապատում:
Պատվեր № 162,

I. ԳՊՐՈՑԻ ՀԱՆՐՈԳՈՒՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՇԱՆԱԿՈՒ- ԹՅՈՒՆԸ

Մեր խորհրդային դպրոցի շինարարութիւնը կեռ-
ւաններով ե ընթանում: Մեր դպրոցի կառուցման ճա-
նապարհին յերբեմն- մանկավարժական ձգտումների
ստեղծագործական թափը նոր նվաճումներ ե կատա-
րում, յերբեմն ել ճանապարհների բաղմազանութիւն-
նից առաջացած շվարումը ե ուժերի ժամանակավոր
անկումը հարկադրում են կենդ առնել, շուրջը նայել,
յերբեմն նույնիսկ յետ դառնալ՝ հետադաշում նոր ու-
ժերով առաջ շարժվելու նպատակով:

Յեվ, չնայելով այդ բոլորին, չնայելով յուրաքան-
չուր քայլափոխում մեր անգիտութեան, անկուլտու-
րականութեան ե աղքատութեան պատճառով առաջա-
ցած խոչընդոտներին ու դժվարութիւններին, նոր
խորհրդային դպրոցի կառուցումն, այնուամենայնիվ,
արագ քայլերով առաջ ե գնում:

Շինարարութեան այս ճանապարհին աշխատանքի
դպրոցի ուսուցչութիւնը դորձնականում ապրում ե
կյանքի ե գործնական մտքի առաջադրած պրոցեսնե-
րի առանձին ողակներ ե այդտեղ կիրառելու գործում
իր ուժերը ե դպրոցի հնարավորութիւններն ե փոր-
ձում:

Ընդունենք, վոր ամենուրեք այդպես չի, վոր բո-
լոր մասսայական դպրոցներում տեղի չունի այդ: Ըն-

դունենք մի բոլակ, վոր միքանի հարյուր դպրոցի համար ե միայն միս ու արչուն դարձել այդ ՁԵ՛ վոր այլ կերպ չեր ել կարող լինել: Միշտ ել նախ առաջապահն ե կազմվում, վոր նոր ճանապարհներ ե փորձում, ամբացնում ե ուղղում ե այդ ճանապարհները, ե միայն դրանից հետո յեն մասսաները գնում պատրաստած ու մաքրած ճանապարհներով: Առաջադեմ դրպրոցի վերջին տարիներս ասլրած բոլոր այդ ուղակներից ամենից կարևորը, վոր աշխատանքի դպրոցին հիմնական բովանդակութունն ե տալիս, անշուշտ, դպրոցի հանրագուճ աշխատանքի խնդիրն ե, վոր ամենից առաջ բղխում ե աշխատանքի դպրոցի նպատակից, այն դրպրոցի, վոր ամուր թելերով կապված ե մեր խորհրդային հասարակայնութիան հետ, այն դպրոցի, վոր մասնակցում ե սոցիալիստական կառուցման: Դպրոցն այդ կառուցվածքից դուրս մնալ չի կարող, ուստի մեծացող սերունդը պիտի դաստիարակվի յերկրի սոցիալիստական կառուցման փորձնական աշխատանքով: Էով դրված հանրագուճ դպրոցական աշխատանքը միանգամայն համապատասխանում ե նաև զուտ-մասնակավարժական նպատակներին, վորովհետև այդ աշխատանքը խթանում, բորբոքում ե ակտիվութունը, յերեխայի աշխատունակութունը, կյանքի հիմունքների վրա նպատակադիժ ե սակզժում, նրա գործունակութիանը հուղական (եմոցիոնալ) գունավորում ե տալիս, ե այլն:

Ահա թե ինչո՛ւ դպրոցի հանրագուճ աշխատանքի խնդիրը մասսայական ուսուցչութիան աչքում տարեցտարի ավելի ու ավելի յե մեծանում՝ նրա մանկավարժական գործի առանցք կազմող խնդիրը դառնալով:

Ժողովրդական կրթութեան մի ամբողջ շարք փորձա-
ցուցադրական կայաններ վերջերս կարողացել են այս
աշխատանքները շատ լայն ծավալել:

Այսպես՝ տեղական փորձա-դպրոցի ղեկավարու-
թեամբ պատանի բնասերներն իրենց ուժերով 1925 թ.
գարնանը այգիների ֆնասատունների դեմ պայքարի մի
հսկա աշխատանք կատարեցին, իսկ 1926 թ. ձմռան
վերջին տեղական դպրոցների ուժով կամպանիա սկսե-
վեց մալխարիայի մոծակի դեմ, վոր լայն շափեր եր
ընդունում: Մոծակների ձմեռելու տեղերը հետազոտե-
լու նպատակով, վերցրին ամբողջ 98 փողոց—3480
տներով: Հետևանքն այն լեղավ, վոր 38 տան մեջ մա-
լխարիայի մոծակ հայտնաբերվեց, վորի դեմ ել պայ-
քար սկսեցին: 1926 թ. ձմեռը Լենինգրադի գավառի
Կոլպին քաղաքի ուսուցչութունն սկսեց պատրաստվել
հանրագուտ աշխատանքի—անտառատնկման գծով:
1926 թ. գարնանը նույն Լենինգրադի գավառի Պատ-
գոլովե վիճակը (ВОЛОСТЬ)՝ վորպես հիմք իր հանրո-
գուտ աշխատանքի, վորոշեց տեղական թռչնաբուժու-
թյունը բարձրացնել: Այս աշխատանքին մասնակցել
են 15 դպրոց, իսկ նույն վիճակի ֆնացած 15 դպրոց-
ները տեղի կաթնատնտեսութունը բարձրացնելու
գործին ձեռնամուխ լեղան: Յերկու աշխատանքն ել
միացնողը Պատգոլովե բիոկայանն եր:

Պատանի բնասերների դպրոցական խմբակների
ձեռքով հանրագուտ աշխատանքների մասին խՍՀՄ
գանադան ծալրերից մի շարք հետաքրքիր տեղեկու-
թյուններ ունենք: Իբրև հաջող աշխատանքի նմուշ
կարելի լե առաջ բերել Տուլա քաղաքի վերոհիշյալ ո-
րինակը,—վորտեղ հիմնական դեր խաղացողները պա-

տանի բնասերներն են չեղել: Գյուղատնտեսութեան ֆեոսատուները դեմ պայքարի հետաքրքիր աշխատանք են տարել Բրյանսկի, Ոմսկի, Ուխասսայի բնասերները՝ 1925 թվին:

Ոմսկում՝ բացի դրանից, պատանի բնասերները ներկայումս պայքար են սկսել շտեմարանային ֆեոսատուների դեմ: Վոչ մի կասկած չկա, վոր մասսայական դպրոցի հանրագուտ աշխատանքն իրականում աճելի մեծ ծափալ ունի, քան յերևում է գրականութեան մեջ: Վարովհեսե նախ՝ մասսայական դպրոցի շատ նվաճումներ դեռ շատ հեռու լեն լրագրութեանը հաննելուց, յերկրորդ՝ դեռ շատ լրագրեր անմատչելի լեն ընթերցողին: Սակայն նույնիսկ վերոհիշյալ աննշան թղերն էլ շատ ակնհայտ են դարձնում, վոր հանրագուտ աշխատանքի վաղեմութեան սրբազան կայծը բռնել է վոչ թե անհատ ուսուցիչների, այլ ուսուցչական մասսաներին և դպրոցական յերիտասարդութեանը: Յեթե ներկայումս ամբողջ շրջաններ ու վիճակներ փորձում են ծրագրված կարգով, միաձույլ օտրփեով, հանրագուտ աշխատանք տանել, այդ պայացուցց է, վոր մենք կանգնած ենք մի այնպիսի շարժման առաջ, վոր իր առաջ հսկայական հնարավորութիւններ և ընդգրկող հեռանկարներ ունի: Ահա թե ինչու դպրոցի հանրագուտ աշխատանքին շատ լուրջ պիտի մտանալ:

Կատարված փորձերի հիման վրա կոչեկալիվ շանքերով դպրոցի հանրագուտ աշխատանքի հիմնական գծերը պիտի նշենք, վորպեսզի հետագայում մասսայական դպրոցի առաջընթացութեանն այդ ֆրոնտում հեշտատնա Այս դրքուկի նպատակն է՝ ողնել ակդերում ու-

սուցչութեանը, վոր նա վոչ միայն գիտակցի այդ աշխատանքի կարևորութեանը, այլ և ըմբռնի, վորպեսզի այնպիսի սխալներ չանի, վորոնք նրան հիասթափեցնել կարող են:

II. ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ ԳՊՐՈՑԻ ՀԱՆՐՈԳՈՒՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Յուրաքանչյուր նոր գործի սկզբնավորութեան իր մեջ վոչ միայն ապագա մեծ հնարավորութեաններ, այլ և վտանգներ և թագցնում. հենց առաջին անճիշտ քայլը, առաջին սխալ մտակցումը կարող է վարկարեկել նոր գործը հասարակութեան աչքում և զժվարացնել նրա հետագա ընթացքը:

Մեղատնում հաճախ շատ հասարակ մտակցում է նկատվում դպրոցական հանրագուտ աշխատանքին. միայն թե այսուրիս լոզունգը պահված լինի: Շատերն են «լոզունգներով» աշխատել սովորել՝ կուրորեն կատարելով վերևից գծածը, լուրջ կերպով հաշվի չառնելով նրանց կիրառելու տեղական առանձնահատկութեանները, չաշխատելով հարմարեցնել այդ տեղական պայմաններին:

Առաջ է քաշվում մի վտրեկ լոզունգ, և բոլորը վրա չին «թափվում» իրագործելու այդ՝ առանց նրա հաջող իրագործումը նախապատրաստական միջոցներով ապահովելու: Այն ել պիտի տանք, վոր յուրաքանչյուր գործում առանձնապես ֆրաստակար է ձևական, պաշտոնական վերաբերմունքը: Յերբեմն ել տեսնում ես, թե ինչպիսի կենտրոնից չեկած շրջաբերականը, տեղերում ընկնելով նահանգական որդանների

ձեռքը, նոր լուսաբանութիւնն և ստանում, ուժեղանում և ավելի աղբու ծանոթութիւններով—որինակ—
«անմիջապէս գործի անցնել», «Էիֆնարկների կառավարիչների պատասխանատուութեամբ» և այլն, և այսպէս ծանրաբեռնված ուղարկվում և դավառներն ու դպրոցները:

Ուսուցիչները հանպարտաստից, իշխանութեան նոր կարգադրութիւններով հանկարծակիի լեկած, խորհուրդ են կազմում՝ գտնելու, թե դժվար կացութիւնից ինչպէս դուրս գան: Այստեղ էլ նվազագույն դիմագրութեան ճանապարհով գնալու գալթակղութիւնն և մեծ—պահպանել գործի արտաքինը՝ ի հաշիվ նրա քովանդակութեան:

Այսպիսի դեպքերում սովորաբար հնարում են վորևէ հասարակական գործ: Մտեղծում են նաև համապատասխան դեկորացիա. «գործողութիւնը» կատարվում և լերելխանների մասնակցութեամբ:

Տեղի չե ունենում նաև հաշվետուութիւնն և... և ամեն ինչ կարգին է:

Իժժախտաբար, այսպիսի դեպքեր մեր դպրոցական իրականութեան մեջ դեռ քիչ չեն:

Հասկանալի չե, վոր գործին նման մոտեցումը հակահանրաչին է, և առողջ գտղափարն ու կենդանի գործը թաղող լավագույն միջոց:

Լինում են դեպքեր, չերբ հանրոգուտ գործին վերին աստիճանի քերիվ մոտեցում ենք տեսնում: Մարդիկ անկեղծորեն ուզում են հանրոգուտ գործ կատարել, համակված են լավագույն ցանկութիւններով. բայց սեփական մտքեր, ծրագրեր չունեն, այլ բավականանում են մերկ տրաֆարետով, անկենդան

որինակով. — առանց հաշվի առնելու տեղական պայ-
մանները, սաների ուժերը. և ազգաբնակչության իսկա-
կան պահանջները: Ընտրում են՝ ինչ ձեռքներն և ընկ-
նում. բայց թե տեղական պայմաններին պիտանի
լին, թե՞ վոչ. — հարցնող չկա: Կարելի՞ չե միթե մալի-
արիացի մոծակի դեմ պայքար սկսել այնտեղ, ուր հա-
մարչա վոչ-վոք մալիարիացով չի հիվանդանում: Կամ
միտք ունի՞ տեղական դշուղացիութեան մեջ պրոպա-
գանդա մղել բազմադաշտյան սխտեմի ոգտին, առանց
դրա համար անհրաժեշտ նախնական հոգաշինարարու-
թյան:

Պարզ ե, վոր թե առաջինից, թե չերկրորդից վո-
չինչ չի դուրս գա, աշխատանքը նպատակի չի հաս-
նի, և միայն տեղական ազգաբնակչության մեջ անվրս-
տահուլթյուն առաջ կգա դեպի դպրոցի նման ձեռնար-
կումները: Այնինչ՝ տեղական կարիքները և աշխատա-
վոր դասի պահանջները բանալը բնավ փոքր բան չի:
Սրա համար անհրաժեշտ ե լրավ դիտել շրջապատը,
մեծ խնամքով հետազոտել սեփական գավառը և հաշվի
առնել նրա բոլոր առանձնահատկությունները: Այս
աշխատանքի ժամանակ տեղական հանրագուտ և կուլ-
տուրական պայմանների բարդ կոմպլեքսում պետք ե
փնտռել, գտնել ավելի թուլլ ողակներն ու նրանցից
ել սկսել:

Այսպես, որինակ, այգեգործությունը զարգա-
ցած շրջաններում անշուշտ տեղական ազգաբնակչու-
թյան ավելի ցավոտ կողմը կլինի այգիների ֆուսա-
տուների դեմ պայքարի խնդիրը, մի գործ, վորի մեջ
նա սովորաբար անոգնական ե, մանավանդ՝ այս կամ
այն ֆուսատվի մասսայական բազմացման շրջանում:

Երբստենսիվ ու հետամնաց դաշտավարական շրջաններում կենտրոնական հարց կլինի տնտեսութեան ինտենսիֆիկացիան՝ կապված բազմադաշտյան սխտեմի անցնելու խնդրի հետ՝ (այստեղ ազգաբնակչութեանը իրական ոգնութիւնն պիտի ցուցց տալ, և վոչ թե միայն պրոպագանդ մղել), արմատապտուղներ մտցնելով, տեսակները լայնացնելով, անասնաբուժութիւնը զարգացնելով և այլն: Ճահճոտ տեղերում, ուր համարյա ամբողջ ազգաբնակչութիւնը հիվանդ է մալխարիայով, ամենտակտուալ հարցերից մեկը մալխարիայի դեմ մղվող պայքարը պիտի լինի:

Այսպես հարվածելով ամենաթուշ կողմերը, մենք դպրոցի ուժերով կարող ենք բարձրացնել տեղական աշխատավոր դասի բարեկեցութեան մակարդակը և հեռացնել նրա զարգացման հիմնական արդելւակները: Իսկ հանրագուտ աշխատանքը դպրոցական աշխատանքի սխտեմի մեջ մտցնելու և վորոշ ծրագրով տանելու համար նախ պիտի պարզել ավշալ զավառի զարգացման տենդենցները և բանալ նրանում թաղնւմբած պտտենցիալ ուժերն ու հնարավորութիւնները: Այս բոլորն առանց որիննտիր զավառազիտական աշխատանքի անկարելի չե: Այս պատճառով ել ընդհժում ենք դպրոցական հանրագուտ աշխատանքի ու զավառագիտական հետազոտական աշխատանքի միացման անհրաժեշտութիւնը: Այս աշխատանքներից չուրաքանչյուրն իրարից առանձին վերցրած՝ չի կարող տալ այն եֆեկտը, վոր անհրաժեշտ է ժամանակակից սոցիալական կառուցվածքի համար: Առաջինն առանց լերկրորդի միշտ մակերեսային ու պատահական կմնալերկրորդն առանց առաջինի՝ հեշտութեամբ զուտ ակա-

դեմիական գրադմունք կդառնա՝ այժմեական կլանքից
ու կարիքներից կտրված: Այս մոմենտներից վորեւ
մեկի գերազնահատումը, վոր այսքան հաճախե նկատ-
վում, դլխովին վնասակար ե՝ ինչպես գործի, այնպես
եկ դարոցի համար:

III. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ ՍԽԱԼ ԹԵՔՈՒՄ- ՆԵՐ ԴՊՐՈՑԻ ՀԱՆՐՈԳՈՒՑ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Բայց մեր ասածը դարոցի հանրագուտ աշխա-
տանքների մասին չեղած նկատառումների մի կողմն ե
միայն: Մյուս կողմը, վոր յերեք չպիտի մուսնայ,
մանկավարժական ե:

Յեթե մենք պահանջում ենք, վոր դարոցը մաս-
նակցի սոցիալիստական շինարարութեանը, այդ
չի նշանակում, թե դարոցն ի վիճակի չե իր ուսերի
վրա վերցնելու տվյալ շրջանի ամբողջ հասարակական
աշխատանքը: Վնասակար մի ցնորք կլիներ այդ:

Նշապես մեր առաջ դրված ե ամբողջ բնակչու-
թեան հանրագուտ աշխատանքում չերեխային բաժին
բնկնող աշխատանքի սրբոյեմը վորոշելու խնդիրը:

Ի հարկե, շինարարութեան մեջ հիմնական դերը
հասակավոր ազգաբնակչութեանն ե պատկանում — սյե-
տական տպարատ, խորհրդալին հիմնարկներ, կուսակ-
ցական և հասարակական հիմնարկներ, վորոնք գործի
չեն կոչում ու կազմակերպում հասակավոր ազգաբնա-
կութունը, և վերջապես, ինքն. ազգաբնակչութունը,
վերջինիս վրա չե ընկած տեղական կյանքը կազմա-
կերպելու ամբողջ ծանրութունը:

Հասարակական աշխատանքում չերեխաների բա-

ժինը վորոշելիս՝ մենք չերեք սեռակ՝ իրարից ելապես տարբեր կարծիքների լինք հանդիպում:

Առաջինը, վոր ավելի լաչն և տարածված ազգութնադեմքն մեզ, հանգում և այն բանին, թե չերեխաները բնավ չպիտի մասնակցեն հասարակական գործին. մեծերի գործն և այդ: Յերեսխաները պիտի սովորեն. շատ-շատ՝ ընտանիքում տան աշխատանքի մի մասը կատարեն, ուրիշ վոչինչ: Վորպես ապացուցց իրենց ասածների՝ առաջ են բերում չերկու նկատառում. 1) չերեսխաները վոչ մի լուրջ բան անել չեն կարող, վորովհետև նրանց աշխատանքի ոգտակարության կոեֆիցիենտը չնչին և. ուստի այդպիսի աշխատանքը բանի պեսք չե, անոգում մի ժամանց և այդ և 2) այդ աշխատանքը դպրոցի սաներին կտրում և ուսումնարանից և տան գործերից: Այս նկատառումները ջրելը դժվար չե: Առաջինն ուղղակի ճիշտ չե: Ամենքը գիտեն, վոր չերեսխաներն ընտանիքում վորոշ աշխատանք կատարում են, մանավանդ՝ գյուղում: Վաղ գարնանից գյուղացին իր չերեսաչին վերցնում և դպրոցից, վորովհետև գյուղատնտեսական աշխատանքի ամենայեռուն ժամանակը նրան «աշխատող» ձեռք և պետք: Գյուղացին չերեսաչին չերկու տարի հազիվ և դպրոց տալիս, վորովհետև տանը նրան «աշխատավոր» և պետք:

Յերկրորդ նկատառումը, թե «հասարակական աշխատանքը կտրում և չերեսաչին տան գործերից», այն և հաստատում, թե չերեսաչի տանը կատարած աշխատանքի ոգտակարությունը համարյա ամենքն են ընդունում: Իսկ չեթե չերեսխան կարող և ընտանիքում ոգտակար լինել, այն ևլ բավականին շատ ոգ-

տակար, ուրեմն ինչո՞ւ պիտի հասարակական աշխատանքի արժեքն անպատճառ գրոյի հավասարեցնել: Վոչ միայն ՌեՍԶ-ի, այլև ուրիշ չերկրների փորձն ակնհայտ է դարձնում այդ պատճառարանութեան անհիմն լինելը:

Դպրոցականների ձեռքով Ֆրանսիան անտառապատելը, «անտառի որերը» Միացյալ Նահանգներում, գյուղատնտեսական խմբակների գործունեությունը նույն Ամերիկայում, վերջին չեմբուպական պատերազմի ժամանակ Գերմանիայում չերեսաների ոգնութունը դորքին,—մի՞թե այս ըստը չերեսաների հասարակական հսկայական աշխատանքի ապացույցը չեն: Անկասկած՝ չերեսաների հասարակական աշխատանքի դեմ բերած պատճառարանութունը կամ անգիտութեան արդյունք է, կամ առաջ է բերվում հենց այնպես, ձեռի համար: Յերկրորդում փոքր իշատե պատասխանատու պատճառարանութուն կա: Համեմատաբար ավելի լուրջ է այն, վորովհետև առաջարկվում է գլխավորապես անտեսական նկատառումներով: Ծնողները շահագրգռված են, վոր չերեսաները շատ սովորեն այն, ինչ վոր պետք է, վոր շուտով վտուքի կանգնեն ու ինքնուրույն կերպով «մի կտոր հաց» աշխատեն:

Յուրաքանչյուր արգելք այդ գծով, դպրոցական կյանքում սովորելն ուղացնող չուրաքանչյուր մոմենտ ուժգին հարվածում է ծնողների գրպանին, ուստի հաճախ թե չերեսաների հանրոգուտ աշխատանքը, թե աշխատանքի նոր մեթոդները դպրոցում ծնողների տրտունջն են առաջ բերում:

Այս տրտունջն իր մեջ առողջ միջուկ էլ ունի, վորին պետք է ուղադիր վերաբերվենք: Հիրավի՝ դրպ-

բոցի հանրագումար աշխատանքը չպիտի խանգարի նրա կրթական գործը, այլ պիտի ոգնի, առաջ մղի ւայն: Յերեխային այնքան չպիտի ծարաբեռնի այդ գործը, վոր խանգարի նրա առաջ գնալը, արդելք դառնա նրա դարգացմանը:

Ծնողական տրտուէջը միաժամանակ խելացի նախադրուշացուէն և անտեղի հաւիշտակութեան դեմ— վերածել դպրոցը— «հրդեհաշիջական աշտարակի» իսկ չերեխաներին՝ «հրդեհաշիջներին», վորոնց գործը միայն այն է, վոր լարված հետեեն, վորպեսզի հենց վոր հասարակական վորևէ անբարեկարգութիւնն նկատեն, իսկույն գլուխ պատռած ոգնութեան հասնեն՝ սպասարկելով իրենց բոլոր ուժերը: Այս չի նշանակում, թե դպրոցները չպիտի մասնակցեն ժողովրդական վորևէ աղետի լուծարքի (լիկվիդացիա) գործին: Մրա դեմ վոչ վոք չի կարող առարկել, սակայն չի կարելի դպրոցական հանրագումար աշխատանքը «հրդեհաշիջական սիստեմ» դարձնել, վորովհետև այդ դեպքում ծնողներին բողոքը միանգամայն հիմք կունենա:

Մյուս կողմից՝ այսպիսի բացասական վերաբերմունք դեպի դպրոցի հանրագումար աշխատանքը պիտի բացատրել գլխավորապիս այն բանով, վոր դպրոցի կրթական դաստիարակչական նպատակը նեղ կերպով է հասկացվում: Ծնողներն այսպես դատելիս՝ հաճախ դեկավարվում են իրենց հին փորձով և բնավ հաշիվի չեն առնում, վոր կյանքը հսկայական քայլերով է առաջ գնում, և իրենց յերխտներից, իբրև սոցիալիզմ կառուցողներից, բացի կարդալ-գրել, հաշիվել իմանալուց հետագայում չպահանջվի նաև հասարակական և հետազոտման վարժութիւններին ամբողջ շարք, գործ-

նական մեծ ուղենշում, վորոնց վրա հին դպրոցը թեթև աչքով էր նայում:

Ամենահիմնականը, վոր նոր կյանքը կարող է պահանջել աճող սերնդից, նրա վոչ միայն վորոշ գիտություն ունենալն է, այլ այդ գիտությունը կյանքի առօրյա խնդիրներին հարմարեցնել կարողանալն է: Այդ ունակությունը կարելի չէ կոփել դպրոցի հանրագուտ աշխատանքի միջոցով միայն: Բացի դրանից՝ ծնողական այդ բողոքի մեջ մենք նեղ ընտանեկան, իր ելությամբ հակահանրալին, տեսակետ ենք նկատում. «չերեխան ընտանիքին է պատկանում և նրանից չպիտի խլվի», — ասում են առարկողները: Ազգաբնակչության այս կարծիքի դեմ կարելի չէ սլաքարել նախ ընտանիքում կատարած դպրոցի գործնական-ուպակար աշխատանքով: Ցանկալի չէ, վոր այստեղ լուրաքանչյուր ընտանիքի ոգնություն ցույց տրվեր յերեխաների կուկիտիվ ջանքերով. որինակ՝ դյուղում կարելի չէ մանկական հրապարակ կամ մսուր ստեղծել և այս ձևով ազատել տանտիկնոջը և դեռահասներին չերեխա խնամելու անհրաժեշտությունից: Այսպիսի աշխատանքով դպրոցն ընտանիքի ուժերը հետըզհետե բաժան-բաժան վիճակից դեպի կոոպերացումը կտանի և գործնականորեն ցույց կտա ազգաբնակչությանը, թե այսպիսի կոոպերատիվ կազմակերպությունը վճրքան ձեռնտու չէ նեղ ընտանեկանից: Յերեխաների ուժերի հասարակական թերագնահատումը նկատելի չէ վոչ միայն ծնողների և ազգաբնակչության կողմից, վորոնք առաջին նվազ սովորաբար թերազավատ վերաբերմունք են ցույց տալիս դեպի դպրոցի հանրագուտ գործը, այլ և պետա-

կան մարմինների կողմից, վորոնք չեն ցանկանում
դպրոցը հանրային բանվորական միավոր ճանաչել:

Յերբեմն դպրոցը հարկադրված է լինում նախոր-
ոք հսկայական հասարակական գործ կատարել, վոր-
պեսզի իր տեղն ամրացնի ազգաբնակչության և տե-
ղական տնտեսական ու խորհրդային վարչական որ-
գանների աչքում և իրեն ճանաչել առաջ Այստեղ սե-
փական ուժերին համապատասխան աշխատանք ընտ-
րելու գործում մեծ դուշությունն է պահանջվում. նա-
խորոք պիտի լավ մտածված լինի, մանրադնին պատ-
րաստութուն և հավաստիացումն, վոր հետևանքները
հաջող կլինեն: Հակառակ դեպքում գործը դեռ իր ա-
ռաջին քայլերը չարած՝ կտապալվի: Հետագայում տա-
պալված դրությունը նորից վերականդնելը հաճախ
անկարելի չե լինում: Դպրոցն այս գուտ տակտիկա-
կան նկատառումները միշտ պիտի հաշվի առնի, վոր-
ովհետև փոքրիկ անուշադրությունն անգամ կարող է
դպրոցի հանրագուտ աշխատանքի առաջ անխորտակե-
լի խոչընդոտներ հարուցել:


Յերկրորդ կարծիքն ավելի նկատելի չե հասա-
րակայնորեն տրամադրված առաջադեմ ուսուցչության
մեջ, վոր ավելի շատ հակված և դպրոցի հանրագուտ
աշխատանքը տեղական կյանքում գերադնահատելու:
Այս գերադնահատումը հենց իրեն՝ դպրոցի դերը չա-
փագանցելու հետևանքն է—իրը տեղական ազգաբնա-
կության կյանքի կենտրոնն և նա, մի տեսակ՝ տե-
ղական «աշխարհի պորտը»:

Դպրոցը տեղական կյանքի համարյա բոլոր խըն-
դիրները պիտի լուծի. նա փորձում է իր ձեռքն առ-
նել տեղական վարչական մարմնի տեխնիկական ա-

պարատի աշխատանքը, փոստի, միլիցիայի, մինչև
խիչ դատարանի ֆունկցիաները, փոխարինել հիվան-
դանոցին, ազրոկայանին, շինարարական գրասենյա-
կին և այլն, և այլն: Ի՞նչ էք կարծում՝ դպրոցի հան-
րոգուտ աշխատանքի այսպիսի ըմբռնումը նորմալ
բան է: Ծիշտ ե՛ր բացառիկ դեպքերում չերբեմն պետք
է լինում ուրիշի աշխատանքը կատարել, բայց այդ
սոսկ բացառությունն է: Պիտի ձգտել աշխատանքի բա-
ժանում կատարել և, դպրոցը պիտի վերցնի միայն
իր բաժինը:

Դպրոցը կարող է ոգնել տեղական հիմնարկնե-
րին այս կամ այն գործը կազմակերպելու, գլխի գցելու,
բայց վոչ չերբեք իր վրա առնելու ամբողջ ղեկավարու-
թյունը: Յերբեք չպիտի մոռանալ, վոր դպրոցը չերեխա-
ների հետ գործ ունի, վորոնց այդչափ ծանրաբեռնելն
ուղղակի հանցանք է:

Ծիշտն ասած՝ չերեխաների և դպրոցի ուժերի
այսպիսի գերազնահատումը շատ տնգամ ուղղակի
ինքնախաբեկությունն է: Այնպիսի գործեր, ինչպես ու-
րինակ—«դպրոցը քարում է փողոցը», «դպրոցը կա-
մուրջ է կառուցում», «դպրոցն ելեկտրոֆիկացիայի
չէ լենթարկում գյուղը» և այլն, ըստ չերեուլթին չերե-
խաների աշխատանքի արդյունք չեն.— դադափարը,
ծրագրի մշակումը, ինչպես նաև այդ որինակներին մշա-
կումը գլխավորապես դպրոցի ավագ ղեկավարների
վրա չէ ընկնում: Այսպիսի աշխատանքներում չերե-
խաներն ըստ մեծի մասին լոկ ոժանդակ տեխնիկա-
կան ապարատ, չերբեմն նույնիսկ դեկորացիա— ֆոն են
դառնում, վորովհետև այդ աշխատանքը չերեխաների
ներկայութեամբ կատարում են մեծերը: Իսկ հաշվե-



ավությունն սկսվում է՝ «մասնակցել են այսքան լե-
րեխաներ» բառերով:

Այսպիսով լերեխաների ուժերի գերազնահատու-
մըն անխուսափելիորեն տանում է նրանց դերը մին-
չև անխնդիր կամ կամակատար ձրի բանվորական ու-
ժի, լերեխաների ուժի պարզ շահագործման, կամ
նրանց կատարելով պատիվացման:

Այսպիսի «հանրոգուտ» աշխատանքն ավելի շատ
մնասակար է լերեխաների համար, և, լավագուցն դեպ-
քում, անոգուտ է հասարակութւան համար:

IV. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ ԴՊՐՈՑԻ ՀԱՆ- ՐՈԳՈՒՑ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Մնում է մի լերրորդ կարծիք ևս, վոր վերն ա-
ռաջ բերած լերկու ծայրահեղությունների միջին տեղն
է բռնում: Այդ կարծիքն այսպես է հիմնավորվում:

Մեր որերում հանրոգուտ աշխատանք ամեն տեղ,
վորքան ուզեք, կգտնեք: Դպրոցն այդ բոլորն իր վրա
վերցնել չի կարող. նա ուղղակի անկարող է. անհրա-
ժեշտ է դրանցից ընտրել այն, ինչ վոր համապատաս-
խան է լերեխաների ուժին, ինչ վոր հասկանալի յե
նրանց, ինչ վոր հեռաբերական է. պետք է դպրոցի
հանրոգուտ աշխատանքն այնպիսի հիմքերի վրա դնել,
վոր այն չզանգաղեցնի յերեխայի անումը, այլ նպաս-
տի վերջինիս:

Չափահասի և լերեխայի հանրոգուտ գործերին
մոտենալու մեջ չեղած հիմնական տարբերությունն էլ
հենց այդ է: Առաջինը պիտի կատարի այն, ինչ հար-

կալփօր ե, հաճախ ի մլասս իր. չերկրորդը պիտի կատարի այն, ինչ հարկալփօր ե և ինչ վոր՝ ոգտակար ե վոյ միայն հասարակութեան, այլ յիվ իրեն:

Հանձին չերեխայի, մենք ունենք աճող հասարակական ուժը և մեզ փոխարինողը, ուստի ամենից առաջ պիտի հոգանք նրա կանոնավոր աճման մասին: Անմտութուն, հասարակութեան և նրա ապագայի համար մեծ մլասս կլիներ, չիթե փոխանակ խնայելու, ամբարեկու, սպառեցինք նրա մատաղ ուժերը. «հանրագուտ գործ» չեր լինի այդ: Հենց սա չել մակկալարժական մոտեցումն ե դպրոցի հանրագուտ աշխատանքի: Միայն այս պայմաններում կարելի չե սպասել, վոր չերեխաները հանրային աշխատանքի ակտիվ մասնակիցներ լինեն՝ բառի բուն իմաստով: Յերեխաների՝ տվյալ հասակի համար այս կամայն հանրագուտ աշխատանքի արտաքին, դիտողութեան մատչելի նշաններն են—գործը կատարելիս նրանց հայտնաբերած նախաձեռնութեան, հետաքրքրութեան, ինքնուրույնութեան աստիճանը, նպատակային հսկումը, տվյալ նպատակի կարևորութեան գիտակցումը, աշխատանքի առանձին ձևերի և ամբողջ ընթացքի պարզ պատկերացումը: Այստեղից մի հանգամանք ել ե բղիւմ—դպրոցի հանրագուտ և կրթական աշխատանքի սինթեզի՝ միացման անհրաժեշտութեանը, վորովհետև այդ դեպքում միայն կատարելի պահանջված եֆեկտը: Այստեղ կրկին կարևոր ե գտնել՝ իրենց եյութեամբ մի դպրոցական աշխատանքի այս չերկու կողմերի ճիշտ փոխհարաբերութեանը:

Վոմանք հակված են անհրաժեշտ համարելու, վոր չուրաքանչյուր կրթական աշխատանքի սկզբնական հանրագուտ աշխատանքն ընդունվի:

Հագիվ թե կարելի լինի այս բանին համա-
ձայնելու

Մենք կարծում ենք, վոր ավելի ուժեղ կլինենք
կրթական աշխատանքը կառուցել զավանի և նրա ար-
տադրողական ուժերի հետադոտման վրա, վոր կկա-
տարեն յերեխաները: Միայն այս ձևով կարելի չե
պարզել անդի աշխատավոր օպգաբնակության իսկա-
կան պետքերն ու պահանջները, վորոշել արտադրո-
ղական ուժերի խոչընդոտները և նշել զավանի հետա-
գա զարգացման հիմնական տենդեցները: Յերեխանե-
րի ձեռքով կատարված հետադոտական աշխատանքը
սովորաբար ղեկավարվում ե այսպիսի հաջորդականու-
թյամբ. 1. Գախնական-կազմակերպչական մամեմս. վո-
րոշվում ե նպատակ կազմող խնդիրը—հավաքական
կերպով քննության ե առնվում այդ հարցը:

Նախորոք «լարվում են» յերեխաների անալիզա-
տորները (զգայարանները—ականջը, աչքը, ըմբռնո-
ղության կենտրոնը և հաղորդիչ նյարդը), այսինքն՝
զգայարանները նախապատրաստովում են նկատած յե-
րևույթներն ու առարկաներն ավելի լավ ընդունելու:

Յերեխաները հանդես են բերում իրենց նախկին
գործը և նախկին դիտողությունը, շահը, նախաձեռ-
նությունը, պարզվում ե այն անելիքը, վոր նպատակ
ե դարձել, նախապատրաստական կազմակերպչական
աշխատանք են կատարում:

2. Սկզբնական ուղեցիտ (որիեմսիտ) մամեմս. անե-
լիքի գործնական ուղեցիտ: Ուղեցիտ եքսկուրսիա
կամ հետադոտումն ե կատարվում, յերեխաների անա-
լիզատորներն ուղղված են դեպի բուն նպատակը՝
ուրիշ խոսքով—ամբողջ ուշադրությունն ուղղված ե

դեպի դիտողութեան առարկան: Դիտողութեանները արտադրութեւն, նշութի ժողովուրդ:

3. Մրազրման մովեցի մեջ մտնում են՝ 1) նշութի սկզբնական համակարգումը, 2) ավելի ճիշտ ու վորոշ անելիքներ սահմանելը, 3) հետագա անելիքները ծրագրումը, եքսկուրսիայի կամ հետադոտման ժամանակ ձեռք բերած նշութի կոլեկտիվ մշակումն ե կատարվում; անալիզատրմանի առուգումը, և նրանց ըմբռնումների ճշտումն, այսինքն՝ ստուգել, թե յերեխաները վորքան ճիշտ են դիտել: Յերեխաները ջոկջկում են նախընթաց մոմենտում ձեռք բերած նշութը—համակարգում են, սխտածի տակ դնում: Իրենց տեսածն ու ստացածը լրացուցիչ կերպով արձանագրում են—կոլեկտիվ կերպով հարցեր են մշակում հետագա հետադոտումների համար: Անելիքը բոլորովին վորոշում ու բաժանում են իրենց մեջ. հետագա անելիքի ծրագրին են կազմում:

4. Հետադոտական աշխատանքի մեջ մտնում են փորձեր կատարելը, անելիքների դժով դիտողութեանները, լարորատոր աշխատանքը, տեղեկատու գրքի աշխատանքը, նշութի ֆիկսացիա կատարելը:

Ավելի լավ ե յերեխաների հետադոտման աշխատանքները յերեխաների կատարած գործնական աշխատանքների հետ կատարել (առանձնապես հարմար ե այս գլուղատնտեսութեան համար):

5. Ամփոփման մովեցի.—1) յեզրակացութեաններ հանելը, 2) ստուգում, 3) յեզրակացութեանների զըրսեվորում. կատարվում ե կոլեկտիվ քննութեան, ստուգման դիտողութեաններ են արվում, հաստատվում ե աշխատանքի վերաստուգումը, յերեխաները սինթեզ

ու անալիզ են անուամ: Այսպիսով, չերեխաների հետազոտման աշխատանքի միջոցով կարելի չէ մոտենալ մի գլխավոր մոմենտի— ստացած արդյունքները կյանքում կիրառելու: Ենպես այս էլ կլինի զսլրոցի հանրագուտ աշխատանքը: Անկասկած՝ չեղած ամբողջ նյութից պիտի ընտրել այնպիսին, վոր կիրառման տեսակետից տվյալ խմբակի չերեխաների ուժին ավելի մատչելի լինի:

Գործն այսպես դնելուց հետո, վոչ թե ձևական ծրագրային նյութը կտիրապետի կյանքի տվածին, այլ ընդհակառակն՝ վերջինս կմանի ծրագրերի սխեմայի մեջ և կլրացնի նրա բովանդակությունը:

Այսպիսով, ծրագրերը կյանքից կբղխեն և վոչ թե վերացական կերպով կկառուցվեն: Նրանք չերեխաների համար հետաքրքիր կդառնան՝ զբոսելով նրանց հարցասիրությունը, նախաձեռնությունը, ոգնելով փորձը յուրացնելուն, հուզական գունավորում տալով չերեխաների ամբողջ աշխատանքին և ստացած գիտելիքները հանրագուտ գործի ծառայեցնելու ուղղություն ստեղծելով: Բացի սրանից, այսպես դրված զսլրոցական հանրագուտ առիտանքը ներտ կերպով կապված կլինի դպրոցի կրթական գործի հետ, բնականորեն կբղխի նրանից, և վոչ թե մի կողմ քաշված կմնա՝ վորևե պատահական կամ դրսից կպցրած բանի պես: Նա կդառնա զսլրոցական ծրագրի մի մասը և կմանի նրա աշխատանքի ծրագրի մեջ:

Այս ձևով ուժերի համապատասխան, ավելի հասկանալի, հետաքրքիր և չերեխաների սրտին մոտիկ հանրային անելիք ընտրելուց հետո, այդ անելիքը կյանքում կիրառելու համար հանրագուտ աշխատանքի

ծրագիրն ե կազմվում, նրա կիրառումը կազմակերպչական տեսակետից պատրաստվում է, նախորոք կշռադատում են հնարավոր զժվարությունները, խոչընդոտները, և այնուհետև սկսվում է բուն աշխատանքը:

Գործին աչապիսի պահանջներով մոտենալուց միայն կարելի չե հաջողություն սպասել: Հակառակ դեպքում շատ հավանական են անհաջողությունները, մի բան, վոր մեր իրականության մեջ քիչ չե պատահում:

Դպրոցի հանրագում աշխատանքի համեմատաբար թույլ զարգացած լինելն, ըստ չերևուցիին, գըլխավորապես պիտի բացատրել այն բանով, վոր մենք նրան մոտենալ չենք կարողանում, այլև այդ գործում չեղած բազմաթիվ անհաջողություններով: Անհաջողություններն ել իրենց հերթին նրանով են բացատրվում, վոր սովորաբար հանրագում աշխատանքը կիրառվում է առանց նախնական հետազոտական և կազմակերպչական լուրջ նախապատրաստության: Այնպես է դուրս գալիս, վոր նախ կատարում են, ապա՝ մտածում:

Ուրեմն՝ նախ լավ պիտի մտածել, հետազոտել, մշակել, նախապատրաստվել, հետո միայն հանրագում աշխատանք կիրառել:

V. ՀԱՆՐՈՐՈՒՑ ԱՇԽԱՏԱՆՔ ՅԵՎ ԿՈՆԵԿՏԻՎԻԶՄ

Դպրոցի հանրագում աշխատանքի մանկավարժական նշանակութունը միայն վերը բերած նկատառումներով չի սպառվում: Մեր խորհրդալին դպրոցի համար ամենից կարևորն այն հանգամանքն է, վոր

հանրոգուտ աշխատանքը չէ կարող չհիմնովի կոլեկտիվիզմի սկզբունքի վրա: Նա յերեխաների մեջ սոցիալական հմտցիաներ ու փորձեր և դաստիարակում, ընդարձակում և նրանց նեղ—յեսական հորիզոնները, մտնում և նրանց սոցիալիստական շինարարութեան շահերի աշխարհը:

Իսլոոցի հանրոգուտ աշխատանքի այս կոլեկտիվացման ճանապարհին մենք մի քանի աստիճաններ ենք տեսնում:

Առաջին աստիճանը — դպրոցի առաջին յերկչոտ քայլերն են, սեփական ուժերի առաջին փորձը—ամենահամեստ փորձերը: Ամենից առաջ յերեխաների կոլեկտիվը պիտի կարողանա իրեն կարգավորել՝ ինչպես հարկն է, փոքր չափով փորձել իր կարողութուններն ու գիտեցածը. հաշվի առնի սեփական աշխատանքի արդյունավետութունը՝ սովորական դպրոցական պայմաններում, հաստատուն դարձնի դպրոցի նյութական բազան, վորն ապագա լուրջ հասարակական բազան է՝ հանրոգուտ աշխատանքի ծավալելու համար: Այս փուլում աշխատանքը կենարոոնանում է դպրոցում և դրպրոցի շուրջը:

Իսլոոցի շուրջը ծառեր անկել, դպրոցին մոտ ծաղկանոց, ցուցադրական բանջարանոց, փորձադաշտ կամ ծառատնկարան պատրաստել, շիթիլների համար փոքրիկ ջերմանոց շինել, կառուցել ցուցադրական հավանոց, դպրոցին կից գտնված պարտեզում արհեստական բներ կախել՝ գյուղատնտեսութեան համար ոգտակար թռչուններ պրավելու, և այլն. համարչա յուրաքանչյուր դպրոց ի վիճակի յե այս բոլորը կատարելու: Անհրաժեշտ է, վոր այս ժամանակ յերեխաները պարզ

դիտակցեն, թե այդ բոլորը կատարում են՝ վոչ միայն իրենց, այլ և տեղական աշխատավորութեան համար՝ վերածնելով դպրոցը մի ցուցադրական կուլտուրական անկյունի, վորտեղ շատ բան կարող են սովորել վոչ միայն դպրոցի չերեխաները, այլ և նրանց ծնողներն ու ընդհանրապես հետաքրքրվողները:

Իրենց փոքրիկ բազան կազմելով, այդպիսի աշխատանքում մի փոքր ամրանալով, դպրոցը բնականորեն, հենց դեպքերի բերմունքով անցնում է յեկրորդ աստիճանին: Այդտեղ և նա իր ուժերը կիրառելու ասպարեզը մի փոքր ընդարձակում ե՝ իր ազդեցութեան շրջանի մեջ սաների ընտանիքներից անդամներ քաշելով: Այս փուլում դպրոցը սաների միջոցով ռզուրպան ե գալիս ընտանիքին: Մենք արդեն ցույց ենք տվել նրա կարևորութունը դպրոցի դիրքն ազգաբնակչութեան աչքում բարձրացնելու և նրա հետ համագործակցութուն (կոնտակտ) ստեղծելու տեսակետից: Մյուս կողմից, այս կոնտակտը արժեքավոր շատ բան ե տալիս դպրոցի կուլեկտիվ աշխատանքը կիրառելու համար: Այստեղ զանազան տեսակի աշխատանքի ամբողջ շարք կարող ե տեղի ունենալ: Աշակերտների ձեռքով տների շուրջը ծառեր տնկելը, տնային տընտեսութեան համար դպրոցի ուժերով կոոպերատիվ ձևով շիթիլ պատրաստելը, տներում ու սարտեզներում ծաղիկների նորոգումը, բանջարանոցներ շինելը, նոր կուլտուրաներ տարածելը, վերատուգիչ կաթնալին և թռչնաբուծական միութուններ ստեղծելը՝ ծնողների տնտեսութունների մեջ և այլ շատ հետաքրքիր աշխատանքներ կիրառելը դպրոցի համար մատչելի կդառնան՝ չերեխաների ծնողների տնտեսութունների և տան կենցաղի պայմաններում:

Յեթե նախորոք դպրոցը կարողացել է ամրացնել իր ցուցադրական բազան, այս բանը նրան շատ կողմնի իր աշխատանքը մասնանշած ուղղությամբ ծավալելու:

Իհարկե, վոչ առաջին, վոչ չերկրորդ փուլերը չեն բավարարելու մեզ: Առաջին փուլում դպրոցը, այնուամենայնիվ, կմնա փակված և, վերպես հասարակական միավոր, շատ թույլ կերպով աչքի կընկնի: Յերկրորդ գեպքում միայն ընտանիքը կընդգրկի. հարկավոր է մի քաջ ևս, վոր դպրոցը դառնա լաջն հասարակական միավոր: Հինց չերկրորդ տատիճանն էլ բնորոշվում է տեղական շրջանում դպրոցի կոլեկտիվ կերպով տարած հանրոգուտ ընդհարձակ աշխատանքով:

Յեթե դպրոցի հանրոգուտ աշխատանքի պրոբլեմի վրա լավ մտածենք, շատ պարզ կգտանա, վոր նրա ուժը չերեխաների այդ աշխատանքին կոլեկտիվ մասնակցելու մեջ է: Յուրաքանչյուր չերեխայի ուլժն, առանձին վերցրած, շատ չնչին է՝ աշխատանքին նկատելի եֆեկտ տալու համար. դպրոցական խմբակի կամ չերբեմն նուչնիսկ ամբողջ դպրոցի չերեխաների վոքբրկ կոլեկտիվի ուժերն էլ բավական չեն՝ այս կամ այն մտածված հաստրակական աշխատանքը կատարելու համար: Նրա մեջ չերեխաների մասսաներ քաշելով միայն, ամբողջ շարք դպրոցական չերեխաների լաջն միութչուններ ստեղծելով է, վոր լաջն հասարակական նշանակութչուն ունեցող խոշոր հեռեանքների կհասնենք:

Լաջն կոլեկտիվ աշխատանքի այսպիսի պայմաններում դպրոցը կարող է խոշոր գործոն դառնալ՝ տեղական աշխատավորութչան կուլտուրական, նյութա-

կան, քաղաքական մակարդակը բարձրացնելու գործում: Այսպիսի մասսայական կոլեկտիվ աշխատանքի սաղմը, ճիշտ է, բացառապես հասակավորների շրջանում, կարելի չէր տեսնել մոտիկ անցյալի «շաբաթորյակներում»: Յեթե մենք գործ ընտրելու մեջ նվազեցնենք պատահականութան ելիմենտը և ուժեղացնենք նրանց կիրառման պլանաչափությունը, այլ և դեպի աշխատանքն ունեցած գիտակից վերաբերմունքը և մասնակցողների շահազրգովածությունը, իր մեջ սոցիալիստական բազմաթիվ ելիմենտներ պարունակող մի կազմակերպություն կստանանք:

Հասարակական բազմաթիվ աշխատանքներ մասսայական այսպիսի կազմակերպություն ունին: Վերցնենք, որինակ, «անտառի որը», պալատը գյուղատնտեսական վնասատուների, կրծողների, մալիարիայի մոծակի, ճանձերի դեմ և այլն: Նպատակահարմար է, արդյոք, վոր այդ գործն անհատ դպրոցներ վարեն: Իհարկե վճի: Ինք վնասատու միջատներ վոչնչացրիք մի տեղում, նրանք բազմացան հարևան տեղում և վտանգի ընկելին նորից անցան ձեր հողամասը. այդպիսով ձեր ամբողջ պալատի աշխատանքն իզուր անցավ: Այսպիսի դեպքերում տանու աշխատանքի ձեռք միայն ուժեր և ջլատում, և ավելի զուտ արտաքին դեմոնստրացիա, քան գործ է ստեղծում: Այսպիսի աշխատանքից վորև է դրական արդյունք սպասելն իզուր կլինի:

Իսկ մենք անպատճառ արդյունքի պիսի հասնեն, այլապես՝ միտք չունի այդպիսի հասարակական գործեր սկսելը: Ամբողջ շարք դպրոցների միասնական ֆրոնտով միահամուռ աշխատանքը, նախորդ զբա-

րոցները և խմբակները մեջ աշխատանքի բաժանում
կատարելով, յերեխաները առկա ուժերը կոտակերացման
յենթարկելը պատշաճ կերպով նախապատրաստված
լինելու դեպքում այնպիսի և՛ ֆեկա և առաջացնում,
վոր ուրիշ վոչ մի դեպքում չենք կարող առաջացնել:

Պատանի բնասերները բիոկայանի փորձը, Տու-
լայի, Ողեսասայի փորձերը բավական համոզեցուցիչ կեր-
պով հաստատում են այս բանը:

Պարզ և, վոր հասարակական նման կամպանիա-
ները միայն սպառնալիքի յենթակա ֆրոնտում պիտի
կենտրոնացնել: Ամեն մի դպրոց տարին առառավելն
յերկու անգամ, բայց, սովորաբար, մի անգամ կարող
ե մասնակցել այսպիսի կամպանիայի՝ առանց իր ըն-
թացիկ կրթական ու հասարակական աշխատանքը
խախտելու: Հակառակ դեպքում՝ ծանրաբեռնում կա-
րող և ստացվել:

Կազմակերպչական տեսակետից չափազանց կա-
րևոր և, վոր այսպիսի հասարակական աշխատանքների
իրագործումը կենտրոնանա շրջանի ավելի ուժեղ ման-
կավարժական հիմնարկի—փորձակայանի և դպրոցի
(բազային), դպրոցի, մանկավարժական տեխնիկումի
կամ մասսայական դպրոցի շուրջը՝ ուսուցիչների և
աշակերտութւան բավական ուժեղ կոլեկտիվով:

Այսպիսի հիմնակետ բազան դալի կերպով կթե-
թկացներ հասարակական աշխատանքի կիրառումը:

Ահա թե ինչո՞ւ յուրաքանչյուր դպրոց, ինչպես
վերն տակ ենք, հասարակական աշխատանքում ուղ-
տագործելու համար պետք և իր թեկուղ փոքրիկ բա-
զան ստեղծի. այս բազաներից համեմատաբար ավելի
ուժեղը բնականորեն մասսայական կամպանիա անց-
կացնելու գործում կենտրոնական տեղ կբռնի:

Նման հասարակական ձեռնարկներում չափազանց կարևոր մոմենտ ե գլխական, հասարակական և կուսակցական որգանների (պիոներերի, կոմյերիտականների և կուսակցութան) հետ սերտ կոնտակտ հաստատելը, ինչպես խորհրդային հիմնարկների հետ (տեղական գործկոմի իր ճյուղերով՝ Լուսժողկոմատի, Հողժողկոմատի, Առժողկոմատի, կոմունալ տնտեսութան գծով): Մասսայտկան դպրոցը տեղական հիմնարկներին հետ անմիջականորեն ե կապվում, իսկ ավելի կենտրոնական գիտական և տնտեսական մարմիններին հետ իր բազային դպրոցների և փորձնական-մանկավարժական հիմնարկների միջոցով:

Այնուամենայնիվ, մենք չենթադրում ենք, վոր այսպիսի աշխատանքի գործնական կիրառման ղեկավարութունը պիտի վերապահվի մանկավարժական, բայց վոչ ստորադաս մարմիններին, վորոնք չերբեմն մանկավարժական խնդիրներն այնքան ել լավ չեն հասկանում և դպրոցի հասարակական ու մանկավարժական նպատակներն ուղղակի չեն ըմբռնում:

Դպրոցի հասարակական աշխատանքի մի ֆրոնտի գաղափարն իր մեջ հսկայական հնարավորութուններ ե թագցնում և արժե, վոր կյանքում նրա գործնական կիրառման վրա աշխատելին դպրոցները: Այնուամենայնիվ, միայն մանկավարժական հիմնարկներն ի վիճակի չեն այդ խնդիրը համապետական մասշտաբով լուծելու: Այդ հարցում դպրոցին ոգնութան պիտի գա պետութունը, վորովհետև այդ պրոբլեմն իր ելուժամբ պիտեական ե: Խորհրդային իշխանութունը չի կարող անտարբեր մնալ դեպի մի տչնպիսի մեծ ու կարևոր խնդիր, ինչպիսին դպրոցի մասսայտկան հանրագուտ աշխատանքն ե:

VI. ՀԱՆՐՈԳՈՒՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի ընտրութիւնը, բացի արդեն մեջ բերած նկատառումներից, արդյունք է նաև դպրոցը շրջապատող պայմանների:

Մեծ քաղաքի կյանքի պայմաններն զգալիորեն տարբերվում են գյուղի պայմաններից. ուստի դպրոցի հասարակական աշխատանքն օրն օրի և այնպէս տարբեր կլինի:

Գյուղակաց դպրոցի համար հանրոգուտ աշխատանք ընտրելը շատ ավելի հեշտ է: Կյանքը գյուղում ավելի պրիմիտիվ է, ազգաբնակչության կարիքներն էլ ավելի պարզ են յերևում:

Շրջապատի բնակչութեան վրա ազդելու տեսակետից, դպրոցը գյուղում համեմատաբար կուշտուրահան ավելի հզոր միավոր է, քան քաղաքում: Մի շարք խնդիրներում գյուղն ավելի անողնական է ու ոգնութեան պահանջ ունի, քան քաղաքը:

Գյուղում հասարակական անելիքներ՝ վորքան ասես... Ուստի դպրոցը պիտի ընտրի այնպիսիները, վորոնք ավելի համապատասխանեն վերն առաջ բերած պայմաններին: Մի շարք մանկավարժական մարմինների վորձը ցույց է տալիս, վոր գյուղի համար ամենաակառուալ խնդիրներից մեկը մեծերի ու վորքերի առողջութիւնը պահպանելու հոգան է: Սրան շատ մոտ է հասարակաց բարեկարգութեան խնդիրը — «անտառի որ» կազմակերպել, պալքար այսպես կոչված «անգործութեան, շրջմոլիութեան» դեմ, ծաղիկներ անկողնու գործի կազմակերպութիւն: Դպրոցն ավելի մեծ դործ կարող է կատարել գյուղացեան սուբյուկը բարձրաց-

նելու խնդրում. այս տեսակետից ղպրոցի համար
ավելի հետաքրքիր կլինեն—գլուղում նոր կուլտուրա-
ներ տարածելը, տեղական տնտեսութւան վսեհ ճշու-
ղի բարձրացումը, մանավանդ՝ յեթե գլուղացիք դրան
քիչ են ծանոթ (այստեղ, բացի անասնաբուծութւու-
նից, ուշադրութւուն պիտի դարձնել ճագարաբուծու-
թւան, թռչնաբուծութւան, բանջարաբուծութւան, այգե-
գործութւան և մեղվաբուծութւան վրա). պայքար գլու-
ղատնտեսական մասատուների, մոլախտերի դեմ, ոգ-
տակար թռչունների խնամք, գլուղատնտեսական բույ-
սերի կուլտուրայի նոր մեթոդների կիրառում, ֆենե-
լոգիք և ողերևույթարանական ուղղութւունների կազ-
մակերպում՝ գլուղատնտեսական նպատակով. և վեր-
ջապես՝ ողնել ազգաբնակչութւունը կոոպերացման յեն-
թարկելու կաթնատնտեսական և թռչնաբուծական
վերստուգիչ միութւունների գործում:

Դպրոցը կարող եր նաև իր վրա վերցնել զուտ
կուլտուրական և կենցաղն ուսումնասիրելու աշխա-
տանք: Քաղաքի դպրոցների համար հիմնական հանրո-
գուտ աշխատանք ե հանրային բարեկարգութւան խըն-
դիրը: Այս աշխատանքը յերեք գծով կարելի յե տա-
նել՝ 1) բնակարանների բարեկարգութւուն, 2) քաղա-
քի բարեկարգութւուն: Առաջին գծով դպրոցը կապ ե
հաստատում բնակարանային ընկերութւունների հետ
և կարող ե ոգտակար լինել բնակարաններն առողջաց-
նելու, բնակչութւունն անհաճո հարեաններից ազա-
տելու, ինչպես նաև տնային ծաղկաբուծութւուն կազ-
մակերպելու գործում:

Այս բոլորը հետագոտման շատ մոմենտներ կտան
և հեշտ կարող են հետաքրքրել յերեխաներին ու ազ-

գարնակութեանը: Մասնավորապէս պայքարը կրժողոկոսների դեմ հնարավոր է միայն վոչ թե բաժան-բաժան փորձերով, այլ լայն, հասարակական միջոցներով:

Քաղաքը բարեկարգելու աշխատանքներից դըպրոցների համար ամենամատչելին քաղաքում կոնսուլիդացիան է ծառեղեն տնկելու հոգսն է և վարակը տարածող կենդանիների դեմ մղվող պայքարը: Առաջինն արտահայտվում է՝ «անտառի որը» քաղաքում ծառեր ու թփեր տնկելով, այդ տնկիչները խնամելով, քաղաքի տնկիչների ֆլուսատուների դեմ պայքարելով, թռչուններ գրավելով ու նրանց խնամելով, վորովհետեւ նրանք վոչնչացնում են տունկերի համար ֆլուսակար միջատները:

Շատ քաղաքների համար պակաս ակտուալ գործ է վարակը տարածողների դեմ մղվող պայքարը՝ Այսպես՝ բոլոր քաղաքների համար էլ նշանակութուն ունի պայքարը ճանձների դեմ, վոր այնքան տարածված է Հ. Ա. Միացյալ Նահանգներում: Միքանի քաղաքների համար՝ պայքարը մալիարիայի մոծակի և կրժողոկոսների դեմ: Շատերի համար էլ, վորոնք հարուստ են այգիներով ու բանջարանոցներով, ահագին նշանակութուն կունենա պայքարը այգիների և բանջարանոցների ֆլուսատուների դեմ:

Այսպիսով, թե գլուղի, թե քաղաքի հանրագուտ աշխատանքների համար կարելի է մի շարք ընդհանուր թեմաներ նշել, վորոնք իրարից միայն կիրառման ձևերով կտարբերվեն:

Ըստ չիրևուլթին, դպրոցների ամենատարածված աշխատանքը պիտի համարել «ծառատունկի որը», վոր հեշտ կերպով կարելի է անցկացնել, թե քաղաքում և թե գլուղում:

Տեղերի տված տեղեկութունների համաձայն, թե քաղաքում, թե գյուղում մեծ տեղ և բռնում պայքարը մալիարիայի մոծակի դեմ: Բավական զարգացած և նաև պայքարը գյուղատնտեսական ֆասսատունների դեմ:

Ներկա զբոսայգի նպատակը դպրոցի ամեն տեսակ հասարակական աշխատանքների քննութունը չե. մենք սահմանափակվում ենք միայն հանրային բարեկարգության և գյուղատնտեսության այնպիսի առանձնակի խնդիրներով, վորոնք իրենց յետևում դպրոցների բավական փորձ ունեն:

Կարծում ենք՝ նոր որինակներ բերելու կարիք չկա:

Մենք կարծում ենք, վոր սկզբում դպրոցներն ավելի մեծ ուշադրութուն պիտի դարձնեն կատարվող աշխատանքի վորակի, քան թե թվի վրա, — «սակավ, բայց լավ»:

Մեր կարծիքով դպրոցի համար ավելի ակտուալ ու փորձած խնդիրներն են ծառատունկի որը, պայքարը պտղատու այգու ֆասսատունների դեմ, թռչուններ գրավելն ու նրանց խնամելը, դպրոցական ծաղկաբուծութուն՝ հանրային բարեկարգության աշխատանքին առընթեր և վերջապես՝ գյուղատնտեսական ասպարեզում ֆինեյոգիկ դիտողութուններ:

VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Դպրոցի հանրոգուտ աշխատանքում արտադրողական հաջողութուն ունենալու համար նախորոք միշտ կազմակերպչական ձեռնարկումներ պիտի նկատ

տի ունենալ—մանավանդ մասսայական կամպանիաների համար:

Հետադաշուժ այդ ամենը մենք ի նկատի կունենանք:

Միայն մի դպրոցի սահմաններում աշխատելն ավելի հեշտ կլինի:

Կամպանիան անցկացնելուց շատ տուճ, ավելի լավ և՛ ուսումնական տարվա սկզբին ընտրել հանրագուտ աշխատանքը: Այդ նախորոք կարող ե նշել կամ մի դպրոց, կամ դպրոցները կոլեկտիվները միասին:

Վերջին դեպքում աշխատանքը բաժանվում ե դպրոցների կամ դպրոցական վորոշ հասակի խմբակների միջև:

Այստեղ չերկու տեսակ մոտեցում կարող չե լինել. 1) վիճակի կամ շրջանի բազայական դպրոցները վերցնում են միևնույն նյութը, կամ 2) ամեն մի դրպրոցական խմբակ ընտրում ե իր ուժերին համապատասխան նյութ:

Ասենք՝ սկզբում ավելի գործնական կլինեը մի շրջանի ըոլոր դպրոցների համար նույն աշխատանքն ընտրել, ըստ վորում, խմբակներից մեկը մշակում ե նյութն ավելի խտացրած, ավելի հետադոտած—յելակետ ունենալով ծրագրերը. իսկ մյուսները հրավիրվում են կամպանիային՝ նվազագույն չափով պատրաստ լինելու պայմանով:

Արտադրողական աշխատանքը և նրա նախապատրաստութունը սահմանելիս աշխատանքը պիտի բաժանել չերեխաների մեջ՝ ըստ հասակի և ըստ կարողության:

Յերեխաներից ավելի հասակավորներն ավելի

դժվար աշխատանք ել են կատարում. փոքրերին ավելի հասարակ և ֆիզիկական մեծ ուժ հպահանջող աշխատանք պիտի հանձնել:

Այսպես, որինակ՝ ըստ Կ. Ա. Թեմիրչազևի անվան բիոկազանի փորձերի, «անտառի որ» նախապատրաստելիս աշխատանքն այսպես եր բաշխվել յերեխաների մեջ.

1. Ամենափոքրերը (նախադպրոցականները և I աստիճանի դպրոցի սուորին խմբակները) ցանկիւ համար պատրաստած սերմերը ծրարներն ելին լցրել: Հենց իրենք ել «ծառատունկի որը» ցանկել տնկել են տնկարանում:

2. Առաջին աստիճանի վերին խմբակների սաները հողից հանել են նորաբույս մատղաշները, «ծառատունկի որն» այդ մատղաշները տնկել են տնկարանի մարզերում. բացի սրանից, մասնակցել են նաև անտառում և տնկարանում տնկելու և ցանելու աշխատանքներին:

3. Յերկրորդ աստիճանի դպրոցների սաներն ավելի դժվար աշխատանք են կատարել.—անտառում տնկելու համար տնկարանից մատղաշներ են հանել, նոր տնկարանի համար մարզեր են պատրաստել, անտառում փոսեր են շինել, իսկ «անտառի որը» մասնակցել են ամեն տեսակ աշխատանքի:

Գործը բաժանելու այս սկզբունքը կարելի չե պահպանել բոլոր մլուս աշխատանքներում:

Հաջորդ տարիներում, յերբ արդեն դպրոցը վորոջ փորձ ձեռք բերած կլինի, կարելի կլինի կանգ առնել յերկու աշխատանքի վրա, ըստ վորում յուրաքանչյուր դպրոցական խմբակ իր վրա կվերցնի դրանցից մեկը:

Վերջը նույնիսկ կարելի կլինի այնպես անել, վոր դպրոցական ամեն մի խմբակ, կապ հաստատելով ուրիշ դպրոցների համապատասխան խմբակների հետ, իր համար հասարակական վորոշ գործ կնշի:

Բայց այս բնավ պարտադիր չէ. այնուամենայնիվ, ավելի լավ է կանգ առնել քչի վրա, բայց լավ կատարել:

Ընտրած աշխատանքը մտնում է դպրոցի ծրագրի ու սլանի մեջ՝ առաջիկա տարվա համար: Ցանկալի չէ նույնպես՝ դպրոցներից կամ մանկավարժական հիմնարկներից վորևէ մեկը նախորոք դարձնել կենսոնական բազա մասսայական հանրագում աշխատանքներ կատարելու համար (տես վերը):

Ամենամեծ ուշադրութուն պիտի դարձնել կապանիայի նախնական պատասխանության վրա. չեթե կողմնակց, դրանից ել կախված է գործի արտադրողական հաջողութունը:

Նախապատրաստութունը չերեք մոմենտ ունի.—

1) Ղեկավարների յեվ հրահանգիչների կապը նախապատասխան, 2) յերեխաներին արտադրողական աշխատանքի պատասխան, 3) նյութերի բազա պատասխան:

Հանրագում աշխատանքի ղեկավարներ ու հրահանգիչներ կարող են լինել ուսուցիչները, պիտներական խմբերի ղեկավարները, պատանի ընասերների խմբակների անդամները և ավելի վստահելի աշակերտները: Նրանց հետ միասին կենտրոնական բազայում նախ մշակվում են մեթոդիկայի, տեխնիկայի և կազմակերպչական ընտրական աշխատանքի խնդիրները, քննվում են առանձին ծրագրային խնդիրները և փորձնականորեն խորացվում են տվյալ աշխատանքի բնույթին համապատասխան փորձերը:

Յերեխաներին նախապատրաստելու գործը ղեկավարում են ուսուցիչներն ու պիոներ-ղեկավարները: Անհրաժեշտ է, վոր այստեղ ծրագրվեն հետևյալ հետազոտական մոմենտները.—կատարել գիտողութուններ, եքսկուրսիաներ, հետազոտութուններ և նշած նյութի լաբորատորական մշակում: Աշխատանքի տեխնիկային ել յերեխաները ծանոթանում են հենց նախապատրաստական աշխատանքների ժամանակ: Նյութական բազա պատրաստել —նշանակում է՝ գործիքներ, նյութեր և տերրիտորիա՝ հող պատրաստել (յեթե դրա կարիքն զգացվի):

Կամպանիայի կենտրոնական մոմենտ հանդիսանում է արտադրողական մոմենտը: Այստեղ մեծ կոլեկտիվի բնդհանուր միությունն ու կազմակերպված լինելն առանձնապես կարեւոր է. մասնակցողները բաժանվում են ջոկատներին, ջոկատները՝ տասնյակներին ու հնգյակներին (ողակներին): Առաջուց պիտի գիտենալ, թե՛ վճրողակն ո՞ւր է գնալու և ինչ է անելու: Սովորաբար կազմում են ղեկավարող շտաբ, կապի սպասավորներ, ոժանդակ և տեղավորող խմբակներ՝ ըստ աշխատանքի բնույթի: Առանձնապես կարևոր է, վոր նախորոք հայտնի լինի մասնակցողների ճիշտ թիվը, ժամանակին բոլորը տեղում լինեն և ուղիղ բաժանվեն՝ ըստ աշխատանքի:

Ամեն տեսակ անտիղի սպասում, անկարգութուն, անկանոնութուն զգալի կերպով ձգում են յերեխաներին տրամադրութունը և վնասում գործի արտադրողականությանը: Ըստ մեծի մասին հենց իրեն՝ արտադրողական աշխատանքի մեջ նկատելի չեն յերկու մաս—հետազոտական և արտադրողական. այսպես, որինակ, յեթե դուք մտածել եք վորոշ հողամասի վրա

մալիարիայի մոծակի դեմ պայքար կազմակերպել, նախ պիտի հետազոտեք տվյալ տեղի բոլոր ջրամբարների վարակված լինելը մոծակի թրթուրով, և միայն դրանից հետո վորոշ լճակներ վերցնեք՝ նավթելու: Այս դեպքում հետազոտելը պայքարից ավելի բարդ ու դժվար աշխատանք է, մինչդեռ անկարելի չէ պայքար մղել, առանց այսպիսի նախնական մասսայական հետազոտման: Արտադրողական աշխատանքը վերջացնելուց հետո, ամենակարևոր մոմենտը, վորոշ մանկավարժական նկատառումներով, նրա հետևանքների հաշվառքն է: Ուղղակի կտրելի չէ ասել, վոր առանց հաշվառքի աշխատանքը միայն գործի կեսն է: Հաշվառքի շնորհիվ չերեխաները կհասկանան, վոր կարելի էր վոչ թե աշխատանքի պրոցեսն է, այլ նրա հետևանքը:

«Ծառատունկի որը» տնկած ծառերից քանի՞սն են կպել:

Ճահիճները նավթելուց հետո մալիարիայի մոծակի վճրքան թրթուր է մնացել:

Վնասատուների դեմ պայքարելուց հետո պտղատու այգու միասը վճրքան է պակասել:

Վճրքան թունավորված կրծողներ են կոտորվել և այլն:


Աշխատանքներին մասնակցողների համար այս հարցերը բնավ պարապ բաներ չեն:


Մեր դիտողութունների համաձայն, այս ձևի հաշվառքը նկատելի կերպով բարձրացրել է սաների տրամադրութունը և հետաքրքրութունը դեպի կատարվելիք աշխատանքը, այլև դրդել է բանալ մի շարք սխալներ, վորոնք հետագա տարիներում այլևս տեղի չեն ունեցել: Վերջապես, պակաս կարևոր չէ նաև վերջնա-

կան ճնական ազիսացիոն մումենսը: Այս հանգամանքը պիտի ոգտադործել՝ տեղական ազգաբնակչության մեջ դպրոցի հանրագուտ աշխատանքի ոգտին պրոպագանդ անելու: Մեծ ժողովում չերեխաները հաշիվ են տալիս իրենց կատարած աշխատանքի մասին, վերջնահաշիվ և կատարվում և հետագա հեռանկարներ նշվում:

Տոնի հաջորդ՝ գեղարվեստական մասը նույնպես շատ կարևոր և, վորովհետև նա մեղմում, զսպում և չերեխաների լարված վիճակը, իմոցիոն կերպով նրանց կապում ազգաբնակչության հետ:

Մենք կուզելինք այս համառոտ տեսութլունով ել բավականանալ:





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039897

1084

Գիրք 12 կուպ. Մ. (1 1/4 մ.)

A $\frac{1}{4416}$



Б. Всесвятский.
ОБЩЕПОЛЕЗНАЯ РАБОТА ШКОЛЫ.
Госиздат ССР Армении
Эривань, 1929 г.
